

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

Արի, Աստուած Հարցն մերոց,
Որ ապաւենդ ես նեղելոց,
Հաս յօգնութիւն ծառայից քոց
Անօգնական ազգիս Հայոց:

Ես կարդում էի Եղեկիէլ մարգարէի Լէ. դուխը. այդ, մարդկանց ցամաքած ոսկրներով լի գաշտի տեսարանի նկարագրութիւնն էր:

Այդ Նարուզդոնոսորի աւերած Հրէաստանն էր:

Իւր հայրենիքի կործանման և իւր հայրենակիցների տարազրութեան ծանր խոհերով տագորուած՝ յուսահատ մտածում էր մարգարէն, որ չկայ այլ ևս Հրէաստան. աւերակ է երկիրը. կործանուած են Երուսաղէմն ու Նրատաճարը. ժողովրդի մի մասը սրի, մի մասը սովի ճարակ է դարձել. մնացած մասը գերութեան ու տարազրութեան է մատնուել և ենթակայ է բնաջինջ լինելու վտանգին:

Սովն ու սուրը զարհուրելի էին արգարե, բայց մարգարէին սաբսափեցնում էր հրէութեան բարոյական մահը: — Սրից ու սովից ազատուած մնացորդը օտար երկրում, բռնաւորների ճանկերի մէջ կարող էր ուրանալ նախնեաց հաւատը, կրօնքը, լեզուն, ազգային սովորութիւններն ու աւանդութիւնները, որոնք իբրեւ զրահ պահպանում էին նրան և ապահովում նրա առանձնութիւնը. նա մերկանալով այդ զրահը՝ հեթանոս ժողովրդի մէջ սլէտք է մոռանար իւր կորցրած հայրենիքը, բնականար իրան շրջապատող հեթանոս ժողովուրդների սովորութիւններին ու կրօնական ծէսերին և լուծուէր որպէս մի կաթիլ՝ ծովի յորձանքներում և որպէս մի հիւլէ՝ մթնոլորտի անհունութեան մէջ:

Հրէաստանը, Երուսաղէմն ու տաճարը աւերակ՝ հեթանոսների ոտքի կոխան սկսեց է մնային: Այդ էր յուսահատեցնում մարգարէին. և նա յուսահատ էր. յուսահատ էր և ժողովուրդը: Իսկ յուսահատութիւնը վախճանական կորուստ է:

Աստուծոյ հոգին բաց արեց Եզեկիէլի առաջ մարդկանց ցամաքած ոսկրներով լի դաշտի տեսարանը և ասաց.

«Մարդոյ որդի, մարգարէացիր այդ ոսկրների վերայ... և ասա.

Յամաքած ոսկրներ, լսեցէք Տիրոջ պատգամը...

Եւ մարգարէացայ, ասում է մարգարէն, ինչպէս հրամայել է ինձ Տէրը:

Եւ իմ մարգարէանալու ժամանակ, ահա շարժումն. ոսկրները յօդ առ յօդ մօտեցան իրար, և տեսայ, և ահա ջղերն ու մարմինը պատում էին (ոսկրներին) և մօրթ էր ձգւում նրանց վերայ. և շունչ չկար նրանց վերայ:

Եւ ասում է ինձ Տէրը, մարգարէացիր, մարդոյ որդի. մարգարէացիր շնչի վերայ. և ասա. այսպէս է ասում Տէրը. Եկ, շո՛ւնչ, շորս հողմերից և փչիր այս մեռածներին ու կենդանանան:

Եւ մարգարէացայ... և նրանց մէջ շունչ մտաւ. կենդանացան ու կանգնեցին. ոտքի կացան շատ ու շատ ժողովուրդներ:

Եւ խօսեց Տէրը ինձ հետ ու ասաց. մարդոյ որդի, այդ ամէն ոսկրները Իսրայէլի տունն է. և դրանք ասում են.

Չորացան մեր ոսկրները, մեր յոյսը կտրուեց և մենք մեռանք:

...Մարգարէացիր, ու ասա դրանց, այսպէս է ասում Տէրը.

Ահա ես կը բանամ ձեր գերեզմանները. ձեր գերեզմաններից ինձ ժողովուրդ կը հանեմ և կը տանեմ դէպի Իսրայէլի երկիրը և կը ճանաչէք, որ ես եմ Տէրը»:

Բաղդաւոր էր Իսրայէլի ժողովուրդը: Երբ դերութեան մէջ սիրուած էր լինում ինչպէս ցամաքած ոսկրներ, նրան միանալու շարժումն էր ներշնչում Աստուած եզեկիէլների բերանով:

Բաղդաւոր էր Իսրայէլի ժողովուրդը: Եւր բնաջինջ լինելու վտանգի մէջ էր լինում փառամոլ Համանների խարդաւանքներով. Աստուած փրկում էր նրան արքայական տան դրանիկ հրէայ Մուրթէի և նրա ազգական, արքայական դահոյք բարձրացած Եսթեր զշխոյի անձնագոհ միջնորդութեամբ:

Բաղդաւոր էր Իսրայէլի ժողովուրդը: Երբ տարադրութեան մէջ քաղցած սովամահ պէտք է լինէին, նրանց կերակրում ու պատսպարում էր Տորիթը: Եւր նրանք փողոցներում սովամահ էին լինում և ոչ ոք իրաւունք չունէր նրանց թաղել, նրանց դադտուկ, մահուան վտանգով թաղում էր Տորիթ, և մտածում իւր հայրենակիցների թշուառութեան ու հայրենիքի աւերման մասին:

Իսրայէլի լաւագոյն որդիքը փառքի և անարգութեան մէջ չէին մոռանում, որ հրէայ են. կործանուած հայրենիք ունեն, տարադրուած ու տառապանքի մատնուած հայրենակիցներ ունեն:

Պահում էին իրանց հայրենական սովորութիւնները. մահուան վտանգով պաշտում էին իրանց նախնիների Աստուածը. հաւատարիմ էին իրանց կրօնին ու կրօնական աշարողութիւններին: Եւ աղօթելիս՝ երեսները զարձնում էին աւերուած հայրենիքի կողմը անձկութեամբ:

Մեծ հրէաների օրինակը և հայրենիքի սէրը կենդանութեան շունչ էր տալիս ցամաքած ոսկրների պէս սիրունուած բայց միութեամբ յօդաւորուած տարադիր հրէաներին:

Բարեկացոց գետերի մօտ նստած՝ լալիս էին. այստեղ յիշում էին Սիօնը—Երուսաղէմի միջնաբերդը—ու ասում. «Թէ մոռանամ քեզ, Երուսաղէմ, մոռանայ ինձ իմ աջը: Կցուի իմ քմբին իմ լեզուն, թէ քեզ չյիշեմ. թէ առաջ քեզ, Երուսաղէմ, չնուագեմ իմ ուրախութեան սկզբին» (Սաղմ. ԶԷ):

Եւ այն գիտակցութեամբ, թէ Տէրը լսում է նրանց, նրանք չէին կորցնում իրանց յոյսը: Փիւնիկ հաւի պէս վերակենդանանում էին, ոգևորուած այն հաւատով որ կը գայ Մեսիան և կը վերականգնի Իսրայէլի կործանուած տունն ու կը թազաւորի յաւիտեան:

Նրանց սպասած Մեսիան Իսրայէլի երկրաւոր թագաւորութիւնը պէտք է վերականգնէր. ուստի երբ Եկաւ երկնքի յաւիտենական թագաւորութիւն հաստատող Մեսիան, Քրիստոսը, նրան չճանաչեցին: Եւ Քրիստոսից քիչ յետոյ Երուսաղէմն ու տաճարը նորից կործանուեցին. երկիրը աւերակ դարձաւ. ժողովրդի սրից ու սովից ազատուած մնացորդը վայրավատին տարագրուեց ի սփիւռս աշխարհի: 1800 տարի մնաց օտար երկնքի տակ. օտար ժողովուրդների մէջ, ատուած, անարգուած ու արհամարհուած: Բայց նա իւր առանձնութիւնը պահեց, չյարեց ոչ մի ազգի, չձուլուեց. չլուծուեց:

Ամբողջ մարդկութիւնը, ինչ կրօնքի, ինչ դաւանութեան և լինէր, ատում էր հրէաներին. հալածանքը անընդհատ էր, բայց հրէան սիրում էր ինքն իրան: Ոգևորում էր իւր հայրենիքի անցեալ փառքով ու նախահայրերով. նա մնաց հրէայ, Աբրահամի, Իսահակի և Յակովբի որդի: Օտար երկնքի տակ ապրում է հազարաւոր տարիներից հետէ. աճում, բազմանում, մտաւոր ու նիւթական հարստութիւն ձեռք բերում. տալիս մտքի և դանձերի համաշխարհային հարուստներ. բայց միշտ նժգեհն ու օտար մնում, չկարուելով իւր Երուսաղէմից, իւր Ենովայից:

Եւ Ենովան վարձատրեց նրա անգրգուելիութեան առաքինութիւնը—Անգղիացիք այս տարի հոկտեմբեր ամսին մտան Հրէաստան, նոյեմբ. 26-ին առան Երուսաղէմը և ընծայեցին այն Իսրայէլի որդիներին:

Անգղիացիք դարձան հրէաների անկնկալած Մեսիան: Եւ այժմ հոգով լսում ենք Աստուծոյ խօսքը, որ ասում է Իսրայէլի որդիներին. «Ահա, ես բացի ձեր գերեզմանները, ձեր գերեզմաններից ինձ նոր ժողովուրդ հանեցի, և կը տանեմ զէպի Իսրայէլի երկիրը. և ճանաչեցէք որ ես եմ Տէրը»:

եւ ի սփիւռս աշխարհի ցրուած Իսրայէլի որդիքը միաբերան գոչում են Յովհաննէս Մկրտչի հայր Զաքարիայի հետ.

«Օրհնուած է Իսրայէլի Տէր Աստուածը, որ մեզ այցելաւ, և իւր ժողովրդին փրկութիւն արեց: Փրկութիւն մեր թշնամիներէց և մեր ատելիների ձեռքից, (Ղուկ. Ա. 68, 71):

Ես չեմ կամենում հաշիւ տալ. իմ հայրենիքի այժմեան դրութիւնը ստիպեց ինձ յիշել Եղեկիէլի ցամաքած ոսկրներով լի դաշտը, թէ՛ այդ տեսիլքի տալաւորութեան տակ ես յիշեցի իմ հայրենիքի այժմեան դրութիւնը:

Մեր հայրենիքն ևս ողողուած է արիւնով. քար քարի վերայ չէ մնացել. հրայրեցութեան մոխիրը և աւերածութեան փոշին շերտ շերտ ծածկում են երբեմն բարեշէն և բարգաւաճ Հայաստանի շքեղութեան հետքերը:

Հայկի որդիքը հազարաւոր տարիներից հետէ բաղդակից էին Իսրայէլի որդիներին: Հայկի որդիների մի մասն էլ իւր արիւնով ողողել է իւր հայրերի հողը և յաւիտենական հանդիստ գտել այնտեղ. մի մասը ազատուած սրից և սովից՝ տարադրուել է ի սփիւռս աշխարհի: Այս դրութիւնը կրկնուել է հազարաւոր տարիներ պարբերաբար. կրկնուեց և այժմ ահռելիօրէն.

Հազարաւորներ շարաշար մահուամբ սպանուեցին, գետամոյն, գահավէժ եղան. կոյսեր և պատանիներ առեւանգութեան մատնուեցին իրանց ծնողների աչքի առաջ. և ծնողները սպանուեցին իրանց դաւակնների առաջ. հարիւր հազարներ տարադրուեցին Արաբիայի անապատները սովամահ լինելու. շատերը իրանց կեանքը փրկելու համար կրօնափոխ եղան, մահմետականութիւն ընդունեցին: Եւ դահճի, այս գործը կատարողն էր թուրքի կառավարութիւնը: Մի մասը մեր ժողովրդի ապաստան գտաւ մեզ մօտ:

Մեր հայրենիքը և մեր վայրավատին ժողովուրդը ներկայացնում է Եղեկիէլի ցամաքած ոսկրներով լի դաշտը:

Բայց ուր է Եղեկիէլ մարգարէն, որ զգածուի այդ դրութեամբ ու մարգարէանայ.

Փշում է ցամաքող ոսկրներին յօդ առ յօդ միացնող հողմը.

Զգացւում է ցամաքած ոսկրներին կենդանութիւն պարգեող աստուածային շունչը:

Հայկի տան ցամաքած ոսկրները ասում են.

Չորացան մեր ոսկրները, մեր յոյսը կտրուեց և մենք մեռանք.

Ուր է հայի Եղեկիէլ մարգարէն, որի բերանով Աստուած ասէր.

Ահա ես կը բանամ ձեր գերեզմանները. ձեր գերեզմաններից ինձ ժողովուրդ կը հանեմ, և կը տանեմ ձեզ դէպի Հայկի երկիրը. և կը ճանաչէք, որ ես եմ Տէրը:

Ո՞րք են հայի զբանիկ Մուրթբէն ու զշխոյ Եսթերը, որ հայօրէն մտածէին, հայի պէս ապրէին. յիշէին, որ կործանուած հայրենիք ունեն, տարագրուած տառապեալ հայրենակիցներ. անձնուիրաբար պաշտպանէին նրանց. որ աղօթէին, և աղօթելիս՝ երեսները դէպի իրանց թշուառ հայրենիքը դարձնէին:

Ուր է հայ Տորեթը, որ քաղցածին կերակրի և մեռածին թաղի չթողնելով գազանների կուր, անցորդների նշաւակ:

Հայ ցրուած ցամաքած ոսկրները պահպանողներ կան. զրանք միայն պահպաններ են, բայց ոսկրներին միացնող շարժումն և կենդանաբար շունչ մարգարէացողները ո՞րք են:

Վեհանձն Անգղիան ազատելով Հրէաստանը թուրքերի բռնակալութեան լծից ընծայում է իւր հայրենիքի սիրով անձկայրեաց հրէաներին: Եւ 1800 տարուայ կործանուած Հրէաստանը վերաշինուում է. բայց նոյն Անգղիան, որքան

և հայասէր, կարող է օգնել հային, Հայաստանի վերաշինութեան գործում: Նա շատ հեռու է: Նրա նաւերը չեն կարող Արարատի բարձունքին հասնել:

Ռուսաստանի սուլինները Հայաստանում էին: Այդ սուլինների համար հայք միլիոնաչափ զոհեր տուին. սակայն այդ սուլինները այժմ անգործ են: Զինագաղարը առանց տուգանքի և առանց գրաւումների և հաշտութիւնը համակել է Ռուսաստանին. որ եթէ տեղի ունենայ, Հայաստանը պէտք է մնայ դարձեալ իւր դահլիճ թուրքի ձեռքին, ժողովուրդների ինքնորոշման սկզբունքով: Ռուսների հեռանալով՝ թուրքի հետ կը խուժեն Հայաստան թուրքերն ու քրդերը. հայութեան վերջին մնացորդն էլ կը ջնջուի. և թուրք ու քուրդ ժողովրդի ինքնորոշման խնդիրը կը վրնի թաղել Հայաստանը ու նրա գերեզմանի վերայ շարունակել իւր «աւերածի պղծութիւնը»:

Իսկ մեր յոյսերը, իսկ Ռուսաստանի յուսադրութիւնը:

— Մենք յուսախաբ կը մնանք, մեզ յուսադրողները յուսախաբող: Կը խմենք մենք այդ դառն բաժակը իբրև վերջին մահադեղ՝ մարդասիրութեան անուշով մեզ մատուցած:—

Մեր ցամաքած ոսկրները, ցամաքած էլ կը մնան. մեր ցրուած ոսկրները ցրուած. իբրև վերջին մխիթարութիւն կը մնայ մեզ աղօթքով զիմել Աստուծուն և ասել.

«Արի Աստուած հարցն մերոց,
Որ ասլաւէնդ ես նեղելոց,
Հաս յօգնութիւն ծառայից քոց
Անօգնական ազգիս Հայոց»:

Յուսիկ Արեւայս.